ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ եկամուտների ավելացման մասով ստույգ գնահատական ներկայացնելն իրատեսական չէ, սակայն կարծում ենք, որ, օրինակ, պետական հատվածում առկա կլինեն որոշակի խնայողություններ: Օրինակ, ինչպես արդեն նշվեց, այն կարող է բերել պետական կազմակերպությունների ծախսերի նվազեցման (օրինակ՝ գրասենյակի պահպանման, էլեկտրաէներգիայի ծախսերի խնայողության և այլն): Այս մասին է վկայում նաև ԱՄՆ-ի փորձը[1]:

Հնարավոր ազդեցություններից է նաև այն, որ առավել բարենպաստ պայմաններ կստեղծվեն տնտեսության տարբեր ոլորտներում բարձր որակավորում ունեցող օտարերկրյա քաղաքացիներ ներգրավելու համար: Այլ երկրում բնակվող, սակայն հայաստանյան գործատուների համար պահանջարկ ունեցող մասնագետը կկարողանա աշխատել հեռավար, ինչը կնպաստի հայաստանյան շուկայում որակյալ աշխատուժի ավելացմանը և արտադրողականության աճին: Արդյունքում կաճեն հայաստանյան տնտեսվարողների եկամուտները և որպես հետևանք կաճեն նաև պետական բյուջե եկամտային մուտքերը[2]: Սա կչեզոքացնի այն մտավախությունը, որ այլ երկրներում բնակվող աշխատողները ստացված եկամուտները ծախսելու են ըստ իրենց բնակավայրերի: Բացի այդ, այլ երկրներից որակյալ աշխատուժ ներգրավվելը ռիսկային է տեղական աշխատաշուկայի համար, քանի որ ըստ ուսումնասիրությունների՝ մեծ է որակյալ աշխատուժի պահանջարկը[3]:

---

[1] https://cutt.ly/RwqFjFYy
[2] https://cutt.ly/swqFFK0Q